

Տարեկան գինն է 10 ռուբլի:
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:
Առանձին համարներով խրատանդիրը 5 կոպեկ:
Խմբագրատունը բաց է ամեն օր լսելի կիսրակ է և ամ օրերից
ատուտան 11-2 ժամը կեսօրից յետ:

Օտարադարձարացիք դիմում են ուղղակի խմբագրության հետե-
ւակ հասցեով. — В редакцію «Мелу Адастану», в Тиф-
лисе, кав. Редакция de «Meghou Hafastani», à Tiflis.
(Caucase).



Խմբագրությունն ուղղած է յոթուածները և թէ նամակները
պետք է պարզ դրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցեով:
Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յոթուած-
ները: Խմբագրութիւնը իր վերայ չէ առնում յետ ուղարկել յո-
ղուածները և պահում է երկու ամիս մինչև ցարհանջ:

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ.
Յայտարարութիւններ ընդունվում են մայրենի և օտար լեզուներով:
Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, պարկաւ-
րաբանի տակ ալ: Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են
ալ: Դանիկերդեանի պարկի տակ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1885 ԹՈՒԱԿԱՆԻՆ
„ՄԵԼՈՒ ՀՅՅՍՍԱՆԻ“
ԳԱՂԱԳԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ
Կրկնաշաբաթիկի նոյն դիրքով եւ ծրագրով:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

I) Պետական կարգադրութիւնը. — II) Առաջնորդողներ աւերայ ամենա-
տեսակ խնդիրների մասին. — III) Ներքին տեսութիւն. — Տեղական և հասարակական
խնդիրների վերաբերութեամբ յոյուածներ և թղթակցութիւնը. — IV) Գաղաքա-
կան վիճակի վերայ յոյուածներ և լուրեր. — V) Մանր լուրեր. — VI) Խառն լու-
րեր. — VII) Բանասիրական. — Ֆէլիտոններ, Պատկերներ, Վեպեր, Մատենախո-
սութիւնը, Գնահատութիւնը, Գիտութեանց և արհեստից վերաբերեալ յոյուած-
ներ. — VIII) Պատասխաններ. — IX) Յայտարարութիւններ զանազան լեզուներով:

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի կիսամեայ 5 ռուբլի:

Փոստի և արան հասցէն. — Ժամբը խմբագրութեան վերայ է:

Ստորագրել կարելի է Թիֆլիսում. I) Խմբագրատանը. — II) պ. Բ.
Շահերովի գործակալութիւնում. — III) Զ. Գրիգորեանի գրականութե-
ւում. — IV) պ. Յ. Շահինյանի խանութում:

Ծանոթութիւն. Առաջիկայ տարին «Մեղուն» կը ցրատարակվի երեւ կամ եւէն անգամ,
եթէ նիւթն ուղղորդները կը ներեն:

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1885 годъ

на ежедневную литературно-политическую газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

ИЗДАВАЕМУЮ ВЪ ТИФЛИСѢ

(II годъ изданія)

ПРОГРАММА газеты общая всѣмъ литературно-политическимъ ежеднев-
нымъ изданіямъ. съ возможно широкимъ развитіемъ мѣстнаго отдѣла.

Подписная цѣна съ доставкой: и пересылкою въ Россіи: на годъ 10 руб.;
на 6 мѣс. — 6 р.; на 3 мѣс. — 3 р. 50 к.; на 1 мѣс. — 1 р. 50 к.

Подписка принимается: въ Тифлисѣ въ конторѣ редакціи при Газетномъ
Агентствѣ В. ШАВЕРДОВА, въ С.-Петербургѣ въ книжномъ магазинѣ „Но-
ваго Времени“. Изгородные адресуютъ свои требованія въ Тифлисѣ, въ кон-
тору редакціи „Новаго Обозрѣнія“, при газетномъ Агентствѣ В. Шавердова.

Редакторъ-издатель А. В. Степановъ

(10-1)

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Ներքին տեսութիւն. — Թղթակ-
ցութիւն Նոր-Նախիջևանից:
Գաղաքական լուրեր. — Գաղաքական
լուրեր.
Մանր լուրեր.
Խառն լուրեր.
Յայտարարութիւններ.
Բանասիրական. — Սուրենյանց
Յովսէփեանի արագ քահանայ:

ԹԻՖԼԻՍ, 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1884 թ.

II

Մենք մեր անցեալ յոյուածում
այն միտքը յայտնեցինք, որ մեր մէջ
ընդհանուր գործերի արդիւնաւոր ո-
րոշման համար, հարկաւոր է որ ա-
մեն հաղորդած տեղեկութիւնը լի-
նին ստույգ և արդարութեամբ, որ-
պէս զի ժողովուրդը կարող լինի
փաստերին ճշգրտութեամբ վերահասու
լինել և ըստ այնմ էլ իւր գնահա-
տութիւնն անել: Այս մենք աւելի
կարեւոր համարեցինք մանաւանդ մեր
հայերի համար, իբրեւ սակաւ զար-

գացած և իրարից կեանքով բաժա-
նած ժողովուրդն համար, որոյ մա-
սերը շատ քիչ են միմեանց ծանօթ:
Զարգացած և լուսաւորեալ ժողով-
րաց մէջ սուտը ճշմարտութեան տեղ
զուրս տանելը, ի՞նչ ոչ անհնարին,
զէ՞ք շատ դժուար է, որովհետեւ
խնդիրն ու անձնաւորութիւնը, ո-
րոնց մասին լինում է վիճաբանութիւ-
նը շատ պարզ է նոցա համար, նո-
քա մտիկ ծանօթ են նրանց, ուստի
և՛ իւրեանց ամուր համոզմունքն ու-
նին կազմած նոցա վերաբերութեամբ,
իսկ մերայնոց մէջ ոչ թէ զիտակ-
ցական համոզմունք է զեկալարում
բազմութեան, այլ միայն կոյր հա-
ւատը զէպի փաստի կամ անձնաւո-
րութեան քննիչ և սորա ճարպի-
կութեամբ առաջացած գրգռում ու
յափշտակութիւնը:

Օրինակներով պարզենք մեր միտ-
քին, այնպիսի օրինակներով որոնք
այսօր գրած են մեր ժողովուրդի ա-
ռաջին:

Երբ անցեալ և այս տարի կա-
թողիկոսացուներ մասին հարց զար-

թեցաւ, զիտաւորապէս խօսվեցաւ
հանդուցեալ Ներսէս Սրբազան Պատ-
րիարքի և Գեր. Սրբազան Մեղի-
սեդեկ Մուրադեանի մասին: Բայց մեր
բան է, որ մեր Ռուսաստանիցիների
համար նոցա մասին տեղեկութիւնը
պէտք է ճաճ կատանից գային, քա-
նի որ մենք Ռուսահայքս (անձանց
և գործերին հմուտ անձինք բացա-
ռութիւն են կազմում) ընդհանրա-
պէս մերձաւոր ծանօթութիւն չ'ու-
նինք նոցա արժանեաց և պակասու-
թեանց մասին: Ի՞նչ գուրա եկաւ
այդ հաղորդած տեղեկութիւններից:
Թէ զրաւոր հաղորդակցութեամբ մա-
մուլի միջնորդութեամբ և թէ եկա-
ւորների ոմանց պատմելով Ներսէս
Սրբազան Պատրիարքը ազգային հե-
րոս է, հրեշտակ ի մարմնի, սուրբ,
անարատ, ազատ ամեն Թերութիւ-
նից իբրեւ մարդ: Խոհեմ, հեռուստ,
խմտտուն, զիտուն, աստուածաբան,
գործունեայ, համբերատար, տո-
կուն, հաստատամիտ, անշահասեր,
և սորա հակառակ այլոց վը-
կայութեամբ Ներսէս Պատրի-
արքը հանդէս է գալիս իբրեւ
մարդ ամեն արժանաւորութիւններից
զուրկ թուլամորթ, շահասեր, խոր-
գախտ անգործունեայ, եկեղեցական
բարեկարգութիւնը խանգարող ա-
նարժան եկեղեցականաց առաջ քա-
շելով և արժանաւորներին յետ մը-
ղելով, գործի մէջ տուրուտու-
թիւն չ'ունեցող, չ'համբերող, ինտ-
րիզան:

Այն եղանակով հաղորդվում են
և տեղեկութիւնը թէ՛ Գերապետիւ
Մեղիսեդեկ Սրբազանի և թէ՛ այ-
լոց վերաբերութեամբ, ոմանք նրանց
երկինք են բարձրացնում, այլք զը-
ժողով իջնցնում, ոմանք հրեշտակ
են նկարագրում, այլք սասանային են
նմանեցնում: Ի՞նչ ընդ փայտ դալար
զայս առնեն, ընդ չորս զի՞նչ լինի-
ցի: Այսպիսի հանդամանքում ի՞նչ
անէ իսկ ժողովուրդը, այն ևս չ'ը
զարգացած և ձեռքին փաստերի
գիտութիւն չ'ունեցող ժողովուրդը:
Պարզ է, որ կոյր զկուրդն կամ այս
կամ այն հաղորդակցութեանց հե-
տեկում պէտք է տկամայ ի վիտս
իւր ներգործէ, կամ պատահմամբ,
բաղդի բերմամբ, առանց հասուն
դատողութեան և գիտակցութեան
յոյուած գործին վարվել: Երբեմն եր-
բեմն տարիների ընթացքում երե-
ւում են և Պօլսի ազգային ժողովին
կամ գաւառական օրէք վարչու-
թեան պաշտօնական արձանագրու-
թեանց մի քանի օրինակ տուրների
Ռուսաստանում, որոնք մեծամաս-
նութեան ոչ ձեռքն են ընկնում և
ոչ էլ հասկանալի են, շատերն էլ
քնաւ չ'են կարողում: Իսկ մեր նշա-
նաւոր եկեղեցական և աշխարհական

գործիչների մանաւոր կեանքի նո-
յա զարգացման աստիճանի, զարա-
փարների և առանձնայատկութեանց
մասին բնաւ հասկացողութիւն ան-
գամ չ'ունին: Նոյն խաւար վիճա-
կի մէջ են, յայտնի բան է, և մեր
առաջահայ կղերք Ռուսաստանի
հայերին և սոցա մէջ կողմ նշա-
նաւոր անձնաւորութեանց վերաբե-
րութեամբ, երբ Ռուսաստանից բար-
ձր զիրք ունեցող անձինք վեր են
կենում և առանց խղճի խայթի
հաղորդում են, թէ Ռուսաստանի
հայ եկեղեցականք ամենքն էլ, ա-
ռանց բացառութեան, ազէտ են, ա-
նարժան, անմիտք և կաշառակիք:
ուրեմն և եկեղեցու շահերին վնա-
սակար:

Այս վիճակի համար հայ մամու-
լը պատասխանատուութիւն չ'ունի.
և մի՞թէ նա անկարող է այս չար-
եաց առաջն առնելու, եթէ կուսակ-
ցական ոգին նրան չ'ը յաղթէ և նա
հաղորդէ ժողովուրդն ամեն փաստ
ստուգութեամբ և բարեխղճօրէն:
Մենք կարծում ենք, որ նա այս գոր-
ծի մէջ ամենից մեծ վերք կարող
է խաղալ յոյուած եկեղեց-
ւոյ շահերին, եթէ միայն իր սուրբ
պարտքը ծանաչել և սրան հաւա-
տարիմ մնալ կը կամենայ:

Առաջիկայ 1885 թ. «Մեղուն»
մտնում է իւր քսան և ութ ե-
րօրդ տարեշնչանը, որ հայ թեր-
թի համար որպիսի երկարատե ժա-
մանակ է, ամենքին հասկանալի է,
իմանալով թէ հայ թերթն ինչ
հանգամանքների մէջ է շարունա-
կում իւր գոյութիւնը: Մենք հա-
մարելով «Մեղուն» հասարակական
թերթի, հարկ ենք համարում մեր
ընթերցող հասարակութեան մի հա-
մառօտ հաշիւ տալ, որպէս զի նա
իր պահանջն էլ անէ իրաւացի կեր-
պով և հայ խմբագրութեանց վե-
րայ զննող աչքով նայէ:

«Մեղուն» ներկայումս ունի 360
բաժանորդ, որից գոնէ 70-ը հաշուե-
լու չէ, իբրեւ ձրիներ, ապառիկներ
և այլն:

Ընթերցողն այս հաշիւն անելով
կարող կը տեսնէ, թէ որքան սուղ
են խմբագրութեան միջոցները թեր-
թին աւելի ընդարձակութիւն տա-
լու համար, որ միշտ խմբագրութեան
բազմաթիւն է եղել:

ընդ թէ նա 1884-ին հրատարակվե-
լու չէ, կամ թէ «Մեղուն» մեծա-
մասնութեան յափշտակութեան չ'ը
մասնակցիլը կաթողիկոսական հար-
ցում ճշդիւ որոշելը դժուար է:

Իրաւ, ամեն թերթ պէտք է հա-
սարակութեան բերան լինի. միայն
«Մեղուն» այդ դէպքում փոքր ինչ
չ'իջկում է այդ պահանջից, իրան
պարտք համարելով լինելու նրան և
զիկալար, նորա յափշտակութեանց
ժամանակ, աշխատելով չափաւորել
այն յափշտակութիւնը, որոնք շատ
անգամ վնասակար են լինում, ա-
ռաջնորդելով անգիտակից ժողովուր-
դը դէպի անհաշիւ և ապարդիւն
գործողութիւնք: «Մեղուն» այս ըն-
թացքն էլ հենց բունց կաթողիկո-
սական հարցում թէ՛ և գուցէ ի վը-
նաս իւր գրամական վիճակին, իւր
անձնական վնասը հասարակականից
զերադաս համարելով և իւր պարտ-
քին չ'ը դաւաճանելով:

Մեր այս մի քանի խօսքերից շատ
կը հասկանայ ամեն ընթերցող, երբ
նա յետ նայէ և աչքի առաջ բերէ
այս տարուան անցեալը: Առաջիկայի
վերաբերութեամբ էլ արդէն «Մե-
ղուն» յայտնէ և իւր բոնեւոր զիր-
քը: Յուսանք, որ ընթերցողները հա-
մոզված են, որ «Մեղուն» հետեւած
չ'է ներքին. անհատական նպատա-
կի, արհամարհելով իւր նիւթական
շահը, այլ ցանկութիւն ունեցած է
պաշտպանելու այն, ինչ որ հասա-
րակաց շահն է համարած:

Այս հանգամանքն աչքի առաջ
ունենալով վստահ ենք, որ ընթեր-
ցող հայ հասարակութիւնը նրան
վիճոյ կը տան առաջիկայ տարին ա-
ւելի ընդարձակելու իւր գործունե-
ութեան ասպարէզին, աւելի յաճախ
խօսելու նորա հետ:

Այժմ նա իսկ խնդրում ենք մեր
գործակալներին, վաղօրոք իմաց տալ
խմբագրութեան, թէ սա ուր և որ-
քան բաժանորդներ կարող է ունե-
նալ առաջիկայ տարին, որպէս զի
խմբագրութիւնս էլ կարողանայ իւր
կարեւոր տնօրէնութիւնը անել, ո-
րով թէ՛ խմբագրութեանս պարտա-
ւորած և թէ՛ մի հասարակական
թերթի իւրեանց բարի ծառայու-
թիւնն արած կը լինին:

Մեր ստորին դատակարգին պատ-
կանող ժողովուրդականք, մանաւանդ
մշակները բոլորովին գուրկ էին իրանց
արին քրտնելով վստասկած և իւր-
նայած կոպէկները ապահով տե-
ղում պահելու և շահեցնելու մի-
ջոցից: Նոքա այդ խնայած գործնե-
րը կամ փալաններում պատտառ-
պահում էին, որ միշտ կորչելու,
այրվելու և գողացվելու վտանգի-
ն ենթարկված կամ դարձնում են

նրանց արծաթեայ դօտի և այլ իրերէն, որ կարեաց ժամանակ գրաւ դնելով կարողանան իրանց կարեւոր դուստրը ձեռք բերել: Այսպիսի գէպքում խեղճը նոյնպէս կորուստ ունի, որովհետեւ գրաւ դրած իրը հաւասար իւր գնի դրամ չէ տալիս տիրոջ ձեռքը և շատ անգամ կէս դնով իւր արծաթեղէնը գրաւ դնողը անկարող գտանվելով իւր ժամանակին թափելու իւր գրաւը կորցնում է իւր բրտնքով վաստակածի մէկ մասը:

Պատահում էր և այն, որ ոմանք իրանց խնայած կոպէկները պահ էին տալիս մի աղայ մարդու, որին նոքա հաւատարիմ և արդար էին համարում—այս գէպքում էլ շատ անգամ կորուստ էին ունենում խեղճերը, որովհետեւ պահ տալը մեծ մասամբ առանց լիցիթի և տոկոսի էր լինում և երբ մէկն ու մէկին մահ էր պատահում, միշտ խեղճի խնայածը վտանգի էր ենթարկվում չենք յիշում և այն, որ յաճախ և հաւատարիմ կարծուած աղան էլ անհաւատարիմ էր գտնվում և խեղճի միամտութիւնից օգուտ քաղում: Աւելի յաճախ պատահած գէպքն այն է, որ խեղճ երիտասարդ արհեստաւորն կամ մշակը աւելորդ փող իւր ձեռքում տեսնելով և անկարող իւր փոքրիկ գումարը ապահով տեղում տեղաւորել, գայլթայկովում է որ և է անօգուտ գումարձութիւնից և ծախսում է նրան, մոռանալով այն սե օրերն, որոնք միշտ այդպիսեանց վրայ են հասնում: Միթէ թիֆլիսցու համար սովորական չէ տեսնել թէ ի՞նչպէս կ'ին-

տոները ամբողջ ամառն փաստակածը մի օրում ֆայիտօնի և քէֆի վերայ են դնում: Լուսաւորիալ երկիրներում ստորին դասակարգի ժողովրդականաց խնայողութիւնը անպահովելու և նրանց սե օրուան թշուառութիւնից ազատելու համար հիմնեցին խնայողական գանձարաններ, ուր ապահովութեամբ և տոկոսով պահպանվում են խեղճի խնայած կոպէկները: Այսօր Ֆրանսիայի մէջ չքաւոր դասի այդ խնայողութիւնը հարկւաւոր միլիոններ են կազմում: Նոյնը կարելի է տեսնել և ամեն քաղաքակրթեալ երկիրներում: Ռուսաստանում էլ շատ քաղաքներում կազմված են այդպիսի գանձարաններ, որոնց հետեւելով և թիֆլիզում վերջին ժամանակ բացվեցաւ այդ բարերար հաստատութեան խնայողական գանձարանի գումար: Գանձարանը գտնվում է արքունական բանկում: Սերգեյեւսկի փողոցում պիթիւնականցի տանը: Հրատարակած են և այդ գանձարանը փող յաճենելու և այնտեղից պահ տուած դրամը տոկոսօք յետ ստանալու կանոններն, որոնց հետ կ'աշխատենք ծանօթացնել հայ ընթերցողներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ

20 հոկտեմբերի.

Հոկտեմբերի 9 տեղե ունեցաւ տեղւոյս ս. Հովիթիմեան օրիորդական ծխական հոգևոր դպրոցը՝ Արուեստական աշխատանքի և ձեռագործական կամ

ատենագործութեան մասին բացման հանդէսը, որոյ համար կազմուած է ռեւանստար Հայուհեաց ընկերութիւնը, ըստ մեծի մասին առաջին կարգի հարուստ տիկիներէից, որք օգնում են տարեկան 500 ռ. նպաստ տալով արուեստական մասին պիտոյից: Փառք և պատիւ մեծապատիւ տիկնանց: Ուրեմն պէտք է խոստովանել, որ մեր հայագի մեծ տիկնայք ևս անտարբեր չեն ֆեռում իւրեանց սեպուհ պարտականութեանց և ազգաշահ գործերու մէջ, վճարելով իւրեանց առատ լուծանքները:

Սոյն հոգ. ծխական դպրոցի այժմեան ղրութիւնը՝ ի նկատի գերազանց է, վստի զե յառաջ մի աննշան դպրոց էր արական սեռի, որոյ ղրութիւնը շատ աննախանձելի վիճակի մէջ էր, սակայն յընթացս չորից ամաց, մինչ բացուեցաւ թեմական հոգ. դպրանոցը, ըստ յորդորելոյ ամենապատիւ Մակար Սըրբազանի դարձաւ նա օրիորդական դպրոց, որ յետոյ գերապատիւ Սուքիաս Սըրբազանի ժամանակ ևս զօրկէր Նորին արթուն վերահսկողութիւնից՝ ներքին ուսումնական և բարոյական վիճակը:

Ձերի կատարման օրհնութեան յանդիսի Արուեստական մասին ի ներկայութեան պ. Տեւել Գալուստ Չարիխանց և խնամատար Հայուհեաց ընկերութեան, դպրոցի կրօնուսոյց արժ. Մարտիրոս քահանայն Գանձապետեանց մի յորդորական ղրաւոր գեղեցիկ ձառ ընթերցաւ ի ղիմաց ուսուցչաց և ուսուցչուհեաց, ի մէջ բերելով ընդհանրապէս դպրոցի ներքին ղրութիւնը, խրախուսելով զանգամուհիս ընկերու-

թեան և միանգամայն մատուցանելով խորին շնորհակալիս և օրհնութիւնը առ աղետուհի տիկնայս, յաւել ևս բացատրել նոցա հոգացողութեան և արդիւնաբերութեան արգասիքը, որք դարման վերակենդանութեան կը մատակարարեն, բարգաւաճելով և ընդարձակելով ղրգորոցի վիճակը:

Յետ որոյ պ. տեսուչ ոգևորուած մի յորդոր շարունակից առ խնամակալուհիս և առ համեստափայլ օրիորդս, յիշելով բարեպաշտուհի տիկնանց հովանաւորութիւնը և խնամքը, որ ունին դպրոցի վերայ: Ապա օրիորդք Ուլ Տէր Աստուած մաղթանքը երգեցին, որով և աւարտեցաւ հանդէսը:

Խմբագրապետ Տէր, խնդրեմ սոյն նամակը Վեդուի Հայաստանի պատուական լրագրի համարներէից միայն անկիւնում տեղե շնորհէք:

Չայն.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Աւտորիայի պատգամաւորաց ժողովի նիստում 23 հոկտեմբերի (4-ին նոյեմբ.) կոմս Կալնաքին ի միջի այլոց ասաց հետեւեալ. — Այնքալ տարի պատասխանելով պատգամաւորաց ժողովի հարցին, մեր յարաբերութեանց մասին Ռուսաստանի հետ, ես ցաւօք սրտի ստիպած էի հաստատելու, որ, թէ և չկար ոչ մի քաղաքական անհամաձայնութիւն և կառավարութեանց յարաբերութիւնը խաղաղասիրական են, բայց հասարակաց կարծիք մանաւանդ մամուլի մէջ նկատվում է զրգիւ, որ ընդհանուր անհան-

գստութիւն և երկուդ է պատճառում, այնպէս որ շատերն առանց հիմնաւոր պատճառի կասկածում էին խաղաղութեան պահպանման մասին: Ես դեռ այն ժամանակ իմ արտայայտում էի հաւաստիք, որ այդպիսի վիճակն, որ համապատասխան չէր ոչ կայսեր դիտաւորութեանց, ոչ աւստրիական-մաճառ կառավարութեան հայեացքներին, կը պարզվի և ինչն իրան կը վերջանայ, որովհետեւ ժողովուրդն ինքը կը համոզվի, որ նորա երկուդ ու կասկածներն ոչ մի իսկական հիմն չունին և որ չկայ ոչ մի արգելք երկու պետութեանց մէջ բարեկամական յարաբերութեանց համար: Այժմ ես կարող եմ հաւաստիացնել, որ իմ արտայայտած կարծիքս բոլորովն իրագործվեցաւ: Ռուսաց կայսեր և նրա կառավարութեան վճռական ցանկութիւնն, որ մեր օգուտափառ կայսեր նոյնպէս և վիճելի կայսեր դիտաւորութեանց համաձայն էր—այն է պահպանել խաղաղութիւնը և ընդհանուր հանդիմանական զէպէրեք կայսրներէ վերջին տեսակցութեան տաւանքին կերպարանք և բնաւորութիւն տուեց: Կայսր Ալէքսանդրի ցանկութիւնը համապարհորդելու իւր կայսրութեան արեւմտեան նահանգներում, ինչպէս և վիճելի կայսեր ցանկութիւնը նրան հանդիպելու, առկիթ տուեց կայսրներէ տեսակցութեան, որոյ ժամանակ պարզ կերպով երևեցաւ երեք կայսրներէ և նոցա կառավարութեանց համաձայնութիւնը և սոցա քաղաքականութեան ուղղութիւնն այն մտքով, որ ես յայտնեցի: Այսպիսի դիտաւորութիւնը ամենուրեք մեծ հաւատարմութեամբ ընդունվեցաւ և ես չեմ համաշուտ ոչ մի երկիր, ուր այս գէպքը մի այլ տեսակ բացատրութիւն ստանար: Ես կարծում եմ, որ այսպիսի խաղաղասիրական համաձայնութեան հետեւանքներն, որ ապահովացնում են մեր նպատակը սահմաններից մէկը և երաշխաւոր են խաղաղութեան և հանգստութեան, անշուշտ արդիւնաւոր կը լինեն մեր կայսրութեան համար: Խաղաղութեան պահպանման հաւատարմքը միջոց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

* ՍՈՒՐԻՆԵԱՆՑ ԹԱԿՈՐ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՆ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԴՄԵՐ.
(Աղցած օրերի յիշողութիւնից):

Հոկտեմբերի 21-ին, երկօրեայ հիւանդութիւնից ղինի, Մոսկւայում վախճանեցաւ Յակոբ աւագ քահանայ Սուրինեանցը, Հանգուցեալը Ախալցխայի էր և քահանայորդի, Երիտասարդ հասակում Սուրինեանցը, իբրեւ փոքրատու, կարգապետ արքեպիսկոպոսի մօտ ծառայելով, վերջերում քահանայ ձեռնադրուեցաւ:

Յայտնի է, որ կարգապետ արքեպիսկոպոսը Ախալցխայի սուրբ Փրկիչ եկեղեցւոյ մեծամեծ անշարժ կալուածներ թողնել, 4 չէն գրեւորաբար, 8—10 աւելումներ, իրանց լեռներով, արօտատեղիներով, ձմեռոցներով և խոտոցներով, Եպիսկոպոսի մահուանից փոքր ինչ յետոյ յիշեալ կալուածոց այս և այն մասի գէմ զանազան վիճեր բաց արին արքունիքը և մասնաւոր կալուածատեւաբը:

Ախալցխայի գաղթական ժողովրդին, ի ղեկմ կարգապետ արքեպիսկոպոսի կողմէն էր իւր հայրն ու զօրեղ պաշտպանը, հարկաւոր էր մի անձն, որ լեզուաղիտութեամբ, օրէնսդրութեամբ, կալուածոց և կալուածագրոց մասին ունեցած լի ու ի տեղեկութեամբ, դիւղական համայնքի հետ լաւ ծանօթութեամբ, ևս աղղեցութեամբ նրա վրայ, կարողանար եկեղեցւոյ իրաւունքը, զօրեղ հա-

կառակորդներ ղէմ, պաշտպանել: Այդ անձը Ախալցխայում, այդ ժամանակ, միմիայն նորընծայ Յակոբ քահանան էր, ուրիշ ոչ ոք: Եւ Սուրինեանցը իւր օրինակի և իրիպիս գործունէութեամբ, միանգամայն արդարացեց հասարակութեան, իւր վերայ դրած, յոյսը, առանց, սակայն, որ և է ղրկանք հասցնելու գիւղականներին:

Մի քանի տարի առաջ մենք անձամբ անձին տեսնեք, ի միջի այլոց, ս. քրքրիչ եկեղեցւոյ կալուածոց և այն մասերը, որոց ղատը վատիկ էր Սուրինեանց քահանան: Հետեւաբար, եթէ այսօր Ախալցխայի, յիշեալ կալուածքից տարին 14.000 ռ. արդիւնք ունին,— դրա մի մասը պարտական են Սուրինեան Յակոբ և վերջերում Ստեփանոս Գէմբրճոյեանց (նոյնպէս փոքրաւոր էր կարգապետ արքեպիսկոպոսին)— հանգուցեալ քահանաներին: Այս երկու հոգեւորականները յիշեալ ահաղին կալուածքները, ըստ օրինակի իրանց մեծաւոր և պիսկոպոսին, պահպանելու մի և խնամելու մը, մեծ հրախօսել ունին, որովհետեւ երկուքն էլ, իրանց ժամանակում, յօգուտ այդ կալուածոց, շատ քրտիք են թափել: Քահանաների թիւըս այդ գործունէութիւնն է պատճառ, որ նրանք երկուքն էլ բաւականին բամբաստեւել են Ախալցխայի մի երկու բամբաստեւելու օտակարգից, իբրեւ կալուածոց կողմուրդ ու աւերիչ: Բայց երկու իսկ քահանաների անական անպաճճօճ կեցութիւնը, ազգակցաց ազգատուութիւնը և իրանց մահուանից յետոյ իրանց ընտանեաց աննախանձելի, պարզ ասած, աղքատ վիճակը, այսօր կենդանի ապացոյց է,

որ այդ մարդիկ բարեխղճութեամբ են վերաբերուել իրանց յանձնարարուած գործին:

1853-ին թիւրքաց զօրքը Ախալցխայի վրայ է յարձակվում: Թիւրքերը սրում են իրանց սրերն Լըզուրումից գաղթող հայերին փողոտելու համար: Գերազուրբար քաղաքում կանոնաւոր զօրք չէ կայ: Սակաւաթիւ պահուող զօրքը միմիայն բերդն է ուղում պահպանել: Հեռագրական զին, կանոնաւոր խեղճութիւնը Սուրեանց տալ: Նշան լաւ վատ և միակ ճանապարհը, որտեղից կարող է զօրք հասնել թիֆլիզից — թիւրքերից բռնուած է: Գաւառի թիւրք ազգաբնակչութեան ուրախութեանը չափ չը կայ: Նա արդէն ամեն մի ախալցխացու կայքի ու ընտանիքի վրայ իւր վիճակը ձգել, պրծել է: Թիւրք զօրաբանակին էլ, զաղտաղդի, նպատակում և առաջնորդում է: Գաղաքի հայ իշխանները փախել բերդն են մտել ընտանիք, Գրտում միացել է հատարակ և զլուրը կորցրած ժողովուրդը: Սա բոլոր յոյսը ղրկել է միմիայն ծերունի և ցաւագար կարգապետ Եպիսկոպոսի վերայ: Թիւրքերն էլ, կարծես, այդ բանը հասկանում են: Շրջափայ լեռներից ձգուած ուղեբերն, ոչ այնքան բերդի վրայ են ընկնում, որքան Եպիսկոպոսի բնակարանին: Հայկական եկեղեցւոյ վրայ: Ի գէպ այդ եկեղեցւոյ նոր շինուած զանգատան զընի խաչն էլ այդ օրում սկսել են (օրը չեմ յիշում) կախել: Յանկարծ սկսվում են ուղեբերի ծայրիւնները: Հիմաւորը հայ-քրիստոնէայ վարդապետները իրանց և իրանց խաչին վերայ տեղացող արձեհեայ անձերի առաջ տեղի չեն տա-

լիս Ռուսները ճարճատու են, հայ վարդապետները խաչից պինդ բռնած վերելակում են զանգատան գլուխը: Եւ—«հաւատք քո կեցուցանել զքեզ» ոչ ոքին, ոչ մի վնաս չի հասնել:

Բայց ժողովրդեան, արանց, կանանց, ծերոց և տղայոց վախճանները մինչեւ երկուքն է համոզում: Ծերունի Եպիսկոպոսը, տան պատշգամբում նստած, սիրտ է տալիս ժողովրդին և անհամբեր սպասում է բերդը ուղարկած ձիււորի վերադարձին: Անա նա երեւում է և քրտեալաւոր ձիււր ղեռ ցած չեկած՝ բըղաւում է «հրաման է, մեծաւոր հայր սուրբ, հրաման է: Կարգապետ Եպիսկոպոսն էլ հենց զրան էր սպասում: Բոպէ չանցած՝ Եպիսկոպոսի բնակարանի տան դուռնակներից մի երիտասարդ քահանայ ցածր է լինում, թուում հեծնում է մի կտաղի ձիւ վերայ և ձեռքին խաչը վեր բարձրացրած բացազանչում է խուռնուած ժողովրդին, «ով այս խաչը տիրում է, թող հետեի լին», ասում է Սուրինեան քահանան և ղէպ ի թիւրքաց բանակը բշտում: Յուսաբեկ ժողովուրդը սիրտ է առնում, սրտածմիկ վախճանները ուրախութեան և խրախուսանաց ձայններ է փոխարկվում, — ողջ Ախալցխան ոտքի է կանգնում: Թիւրք, փետտո, կայցին, ուրազ—ահա ժողովրդի միակ ղէնը: Սուրինեանցի ձին վաղում է, ժողովուրդը իւր ոտքի քայլերով համոզում է նրան և խառնաշփոթ աղաղակներով զրոհ տալիս թիւրք բանակի վրայ: Չը կամենալով անձնաղոհ հայ-քրիստոնէին երկու կրակի մէջ թողնել, բերդապահը ստիպուած է լինում դադարեցնել ռմբաձգումը բերդից:

Շչկուած թիւրք զօրքը թողնում է իւր բնակարաններն և փախչում: Հայերը յաղթում են և յետ դառնում: Իշխան Աղդոնիկովի կարգապետութեամբ հայերին իսկոյն ղէնքեր են բաժանվում: Կազմվում է քաղաքի ինքնապաշտպան զուգը: Գնդապետը հայ երիտասարդ խաչակիր քահանան է, որ մի քանի օր նպատակով մինչեւ թիֆլիզից զօրք ժամանելը, պաշտպանում է քաղաքն ու բերդը:

Շատ հասկանալի է, որ պատերազմը վերջանալուց յետոյ Սուրինեան քահանան պարգևատրվում է պատշաճաւոր շքանշանով, ի զայրոյթ իւր հակառակորդներին և ի նախանձ միամիտներին: Այս ամենը, ինչ որ զրեցիքը, սիրելի ընթերցող, մենք չենք տեսել: Բայց լըսել խաչել ենք: Սուրինեանց քահանային մենք տեսել և ճանաչել ենք 1853—60 թուականներին:

Այդ թուականներում տողերիս գրողը գիւղից եկած մի պատանեակ—ս. Փրկիչ եկեղեցւոյ փոխ էր ասում, չապիկ հաղնու, կերտն բռնում, ղոպուութիւն ու տիրացութիւն անում: Տէր Յակոբը, իւր գրաւիչ սիրուն, կերպարանքով իւր հպարտ—կործրը միշտ դուրըս ցցած—քալուածքով, իւր խորխորածայն բնաւատացութեամբ, լմ և լմ ընկերների հիպոման և ամենամեծ համակրութեան առարկան էր միշտ: Այդ էր պատճառը, որ ս. Փրկիչ եկեղեցւոյ փողոցի սպասաւորներու, մի օր միմիայն հուաւորուած կատարեալ սուր արիւղ ու մեղ

Այդ այն օրն էր, երբ չոր լեզուները քաղաքում յանկարծ լուր տարածեցին՝

Պ. Շ. հաղորդում է.— Դատ ժամանակ է, որ նոյնպէս էլ մի անգամ և կեղծեցի գաղթում սկսել են երկարակ շինութիւն կառուցանել, որտեղ, ինչպէս ասում են եկող դպրոցական տարուանից Հալաբարի ու Մարիամիան դպրոցն է տեղափոխուելու։ Մնում է մեզ մի «Դաղկոց» ունենալ երկուսն մանկանց համար։ Դատ լաւ կը լինէր, եթէ ս. Մինաս եկեղեցւոյ «Գեղարեան» ծխական դպրոցը եկող տարուանից «Դաղկոցին» փոխարինէր։

ԲԱՂՈՒԹՅԱՆ Պ. Ռ. գրում է.— Բոթաբեր հեռագիրը մի քանի օր սրանից առաջ գուցէ էր այն տիրալի լուրը, թէ Ներսէս Կ. Պօլսոյ պատրիարքը ի Տէր հանգեաւ։ Ամեն հայի սիրտը տիրութեամբ լցուեցաւ լսելով այն մեծ մարդու մահուան լուրը, որոյ անունը դրօշմուռ էր մեր սրտի խորքերում։ Միթէ քիչ ցաւ, քիչ հոգ ունէինք, որ այդ էլ աւելացաւ։ Մինչդեռ կաթողիկոսական ծանր հարցը անլուծ մնացած էր, երևան եկաւ դրա մահուամբը և Պօլսոյ պատրիարքութեան հարցը։ Ամսոյս 4-ին Բագուի հայ հասարակութիւնը կատարեց Ներսէսի հոգեհանգիստը։ Եկեղեցւոյ մէջ «Գեղարեան» շուրջը խմբուել էին «Մարդ. ընկ.» երկուսն դպրոցաց սանիկները, իւրեանց ուսուցիչներով, վարժուհիով ու խումբն բաղնիքով ժողովրդի։ Ամենքի սիրտը ճնշուած էր, Պատարագի խորքէն քանաչափ Մերգարեդեանը այդ առթիւ մի սրտառու ճառ խօսեց ասելով թէ «մարդ մեռնում է բայց նրա գործերը անմահ են մնում»։ Արժ. հայրը դարձաւ դէպի հայ ժողովրդեան ամեն դասակարգին և յորդորեց, որ ամենքը զենք իրենց անթաւառ պսակը Ներսիսի գերեզմանի վերայ։ Ոչ թէ ներթական պսակ, այլ բարոյական։ Եւ այդ պսակը ձեր բարի գործերն է, որ պիտի գործէք յօգուտ եկեղեցւոյ և ժողովրդին։ Ահա այդ էր ցանկանում Ներսէս։ Դատերը տէր հօր ճառի ժամանակ արտասուում էին։

Ապա պատարագը վերջանալուց յետոյ ասուեցաւ դարձեալ Ներսիս դամբանական։ Մէկը, որ կարգաց մի տիրացու բաւականին ձիգ և տաղտկալի իսկ միւսը կարգաց աշակերտներից մէկը բաւական պարզ և ազգու էր։ Այդ տեղ յիշաւ որոշ կերպի։ Նկարագրած էր ի Տէր հոնդուցեալ Ներսէս պատրիարքի կատարած այն սիրալի գործերը, որոյ համար այդչափ սիրելի էր դարձած Ներսէս։

Ներքին գործոց նախարարի կարգադրութեամբ «Արձագանք» շաբաթաթերթը դադարում է 8 ամսեայ ժամանակաւ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական բժշկական ամսագիրը «Tribune médicale» հաղորդում է դօկտոր Գէյօնի նկատած հետաքրքիր տեղեկութիւնները մարդոց գլխիկներին մեծ ութկանց մասին և այս նկատողութիւններից հանած հոգեբանական հետեւեցողները։ Ամենամեծ գլխիկն ունենում են մտաւոր աշխատանքով պարսպող մարդիկը, բայց այս տեսակ պարսպմանը մէջ շատ տարբեր նրբութիւններ կան։ Այսպէս, Գէյօնի հետախուզութեամբ երեւցաւ, որ գիտութեանը ձեռնարկն անդամների գլխիկները մեծածաւալ են, քան թէ միւս ձեռնարկողներինը։ Փարիզի բարձրագուստ ուսումնարանի աշակերտների գլխիկն աւելի մեծածաւալ են, քան թէ Սէն-Սիւր ուսումնարանի աշակերտներինը, Ecole normale ուսումնարանի աշակերտների գլխիկն աւելի զարգացած են, քան թէ Saint-sul-ice հոգևոր ուսումնարանի աշակերտներինը՝ առաջինների գլխիկները չորագիծը 58. 50 և 60 սանտիմետր է, իսկ վերջիններինը 55—58 սանտիմետր։ Առհասարակ նկատած է, որ փոքրածաւալ գլուխ ունեցողները ֆրանսիական հոգեբանականների մէջ են պատահում։ Արհեստով պարսպողները գլխիկներ աւելի փոքրածաւալ են, քան թէ վաճառականներինը, բանկիրներինը, ճարտարապետներինը, ծառայողներինը և այլն։ Ֆրանսիացի չլեապ (գլխարկ) կարողները գլխիկն, որ ամենափոքր գլուխը արհեստաւորներն և ծառայողներն ունեն, ֆարտաշների գլուխներն այնքան փոքր են, որ ֆրանսիայում առած է դարձել և փոքր գլուխ ունեցողին ասում՝ «Il a une tête de maçon»։ Գլխի ծաւալը մեծանում է մտաւոր ընդունակութիւնները վարժելով։ Գլխիկի քաղաքը բնակութեան համար տեղափոխուող գիւղացու գլուխը ծաւալով մեծանում է։ Աֆիցերների գլխիկներն աւելի մեծածաւալ են, քան թէ ղեկավարներինը։ Բրօկի նկատողութիւնից երևում է, որ բժիշկների գլխիկներն աւելի մեծածաւալ են, քան թէ ֆէլդշերներինը։

Կառուցողական լինա՝ խաղաղութեանը — Աւստրիական ֆարմացիոնեական (բժշկականական) ամսագիրներից միում հետեւեալ նկատողութիւնն էր արած շատ անգամ ցոյց ենք տուել անմարդկայ ուղեւորից յինած խաղաղականի միատող յատկութիւնը։ Երեւանները շատ անգամ հիւանդացի են՝ բերանի մէջ առնելով կառուցողից յինած խաղաղութեան, ծիծ է այն։ Այս տեսակ դէպքից հիւանդանալուց յետոյ բժիշկ Տօլէնը գտաւ, որ կառուցողի խաղաղութեան 60, 55% օկիս ցինկ է պարունակում։ Ցանկալի է, որ ծնողներն այս հանգամանքը աչքի առաջ ունենան և զգուշանան այդ տեսակ խաղաղութեան երեւաններին տալուց։

Խմբագիր Պ. ՍԻՄԵՆՆԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԵՆՅԻՍՏԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
«Արիւր» ամսագրի հրատարակութեան № 2 պատկերազարդ գիրքը
ԱՌԻՆԱՐԻՈՒՍ
«ՀԱՅԱՑ ՄՐՋԻՆ»
(Հունձ, ջրհեղու, շտապ-ՄՐՋԻՆ) շուն ու աւաղակ ոտնակը, Արշաւանք, Երկու զորավար, Կովային թագաւորութեան մէջ, մրջյններ, Բի ազգային ժողովը, Կովանոց (աւերում) Գլխի 40 կոպէկ է փաթիլ ծախուող 50 կ. Ծախվում է Բ. Շահվերդյանի լրագրական գիրքակալութեան մէջ, ուր և պահուելու է, Հասցէն.—
Tiflis. Ga. etn. agent. B. Shaverdova.

ՅԱՅՏՆԻ ԲԱՆԱՍԵՂԸ

ՍԼՅԱՍԻ (Կապիտան Պետրոս Մալաթեան) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ընտիր թրգթի վերայ մարդու ստուգած I, II և III մասերը միասին լոյս տեսաւ և արդէն վաճառվում է Բագուում իմ սեպական տպարանում և Թիֆլիզի գրազատաւորներում։ Գինն է 1 և 20 կ.։
Ցանկացողները կարող են գրիմը հետեւեալ հասցէով.— Եւ Բաքու Եւ Թիֆլիզի Ալեքսանդր Կասաբով։

ԱՂԲԻՒՐ

Լոյս տեսաւ № 11 (նոյեմբեր) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ
№ 11

Ներսէս պատրիարքի մահը.— Փոքրիկ Հայկը եղ. Բ. Տէր-Աստ.— Աշնան նշաններ, Յակ. ձաղարք.— Ժան Բատիստ Լիւլլի (փ խաղաղ)։ Տ. Յովհաննիսեան.— Սոխակ (Բանաստեղծութիւն)։ Աղ. Ստեփանեան.— Պարագութիւն (Եմիլ Զօլայի) Տիկ. Փ. Խօջամէ։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒՅՍ.

Անշակ ծառի զարգանալը Կ. Կ. Մել-Շահ։

ՀԵՏԱՔՐԻՐ ՏԵԼԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ապակեայ անձեռնոցիներ։ Երկաթեղիկի համար թղթէ ձողեր։ Սընտորով բժշկուիլը ջրգողութիւնից։ Յատակի վրայի եղած թանաքի ու չընչացիներ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ.Բ.

Կատուները ծառայութեան միջ։

ԶՈՒՐԱՆԱԼԻՔ.

Հանելուկներ։ Ազգականներ։ Թուականական խնդիր։ Բերուս։ Նախընթաց № 10-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը։

Ներկայ համարի հետ ուղարկում ենք մեր տարեկան բոլոր բաժանորդներին «Աղբիւր» այս տարուայ առաջին պրէմիան՝ օլճօրաֆիկական պատկեր։ Ցաւում ենք, որ խմբագրութեան անգոր գտնուեցաւ իր խոստման համաձայն տալ «Պարոյր Հայկազնի և Մովսէս Խորենացու» պատկերը, որ նկարիչ էր Հայազնի նկարիչ պ. Բաշինջաղեանը և պատրաստել էին Վիլենայում։ Այժմ նոյն նկարը ուղարկելիքը հայր Վ. Եւսէպ Ալիշանին պատրաստել տալու համար, և կ'ուղարկենք առաջիկայ տարուայ մեր բաժանորդներին։

Ներկայ տարուայ մեր այն բաժանորդները որոնք առաջիկայ տարի «Աղբիւր» շտաման, այնու ամենայնիւ նրանց էլ կ'ուղարկուին այդ պատկերը։

Բացուած է «Աղբիւր» առաջիկայ 1885 թ. բաժանորդագրութիւնը։ Ուղարկում ենք ներկայ №-ի հետ, աւելի յարմարութեան համար, և պատրաստած նամակներ ու ծրարներ։ Մինչև առաջիկայ դեկտեմբերի 15-ը իր բաժանորդագրի վճարողը յունուարի մէկին կը ստանայ և երբ որ դ ձրի պրէմիայ—մի իւղաներկ պատկեր։

Կովկասեան գրազատաւորի՝ Զ. Գրիգորեանցի հրատարակութեամբ
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Ա. Ս. Ա. Գ. Ի. Բ.
Հայոց գրողների համար մասն ուսումնական և բնական (առաջին շրջան) 40 պատկերներով. Աշխատանքից Աղէք. Սիւնիսեանց։ Գինն է 60 կոպէկ։
(10—)

ՏԻԿԻՆ ՎԱՍԻԼԻԵՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ և ՊԱՆՍՈՒՄՆՈՒՄ ընդունվում են գիշերօթիկ և երթևեկի աշակերտներ և աշակերտուհիներ։ Կատարականին ֆրանսուհի է։ Ամենայն առարկաներ ուսուցանում և կրկնում են։ Նամակների փոստի գին մնացը, դեղատան վերին յարկումը № 11. Լուիս-Մեդիկովսկի փողոցի վերայ։

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԷ և ՇՈՒՏ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

Զ. Գրիգորեանի «Կովկասեան գրազատաւոր» հրատարակութեամբ.

Ս. Պալաստեանի

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց լեզուի (գրաբառ). մասն առաջին. երրորդ տիպ։ Մի և նոյն հեղինակի աշխատանքներին լոյս են տեսած և աշխարհաբար քերականութիւն.

Մասն առաջին գինն է 25 կոպէկ.
Մասն երրորդ » 40 »
Մասն երրորդ » 20 »
(10—3)

Մամուլի տակից լոյս տեսաւ.

«Վարձարան» հանդիպարական ամսագրի հրատարակութեամբ Կեդեալ գրողները.

1) «Կենդ կոնդիտուր և ԳԱՍՏԻՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ» հեղ. Լուիզա Բելլա.

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1885 ГОДУ ЖУРНАЛА „ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“.

Журналъ, какъ и прежде, будетъ выходить по четвергамъ, въ размѣрѣ отъ 1 до 2 печатныхъ листовъ, по слѣдующей программѣ:

I. Статьи по всѣмъ вопросамъ, вытекающимъ изъ теоріи права и судопроизводства. — II. Перечень, изложеніе и обсужденіе важнѣйшихъ распоряженій и узаконеній правительства. — III. Судебная хроника: а) отчеты о засѣданіяхъ въ судахъ, преимущественно Кавказскаго края, и б) особенно интересныя рѣшенія Кавказскихъ гражданскихъ судовъ по вопросамъ права и судопроизводства, вызваннымъ мѣстными особенностями края. — IV. Корреспонденціи юридическаго содержанія. — V. Краткіе отчеты о новыхъ книгахъ юридическаго содержанія (Обзоръ юридической печати и библиографія). — VI. Смісь (разныя извѣстія) случаи изъ судебной жизни и практики. — VII. Тезисы и текстуальное изложеніе кассационныхъ рѣшеній: а) департаментовъ сената и б) Тифлисской судебной палаты. — VIII. Извлеченіе изъ приказовъ о важнѣйшихъ назначеніяхъ по вѣдомству Юстиціи. — IX. Судебный указатель. Резолюціи Тифлисской судебной палаты по дѣламъ апелляціоннымъ и кассационнымъ. — X. Объявленія—казенныя и частныя.

Выполнить, по возможности, свои прошлагодня общанія предъ читателями, редакція «Юрид. Обзоръ» поспѣшаетъ придать своему журналу въ будущемъ году еще болѣе обширный интересъ, при содѣйствіи многихъ прежнихъ и нѣкоторыхъ новыхъ сотрудниковъ.

Кромѣ статей общаго юридическаго характера по вопросамъ гражданского и уголовнаго права, межевымъ, нотаріальнымъ, судбно военнымъ и пр., а также о внутренней жизни кавказскихъ судовъ и о вопросахъ дня, въ 1885 г. будутъ помѣщены: грузинскіе законы царя Вахтанга, съ необходимыми предисловіемъ и примѣчаніями, и продолженіе изслѣдованія законовъ: армянскихъ — по Мхитару Гому, еврейскихъ — по Маймониду, мусульманскихъ, собственно Кавказскихъ народностей; ихъ адаты и пр.

УСЛОВІЯ ПОДПИСКИ

Редакція и администрація журнала (для пріема подписки, объявленій и разничной продажи)—Тифлисъ, Соломская ул., д. кн. Меликова.—подписная цѣна на журналъ, съ доставкою и пересылкою: на годъ—10 р., на 6 мѣс.—6 руб., на 3 мѣс.—3 р 20 к. на 1 мѣс.—1 р 25 к.—Разсрочка въ платежѣ денегъ допускается—для годовыхъ подписчиковъ: при подпискѣ 4 р., въ мартѣ и апрѣлѣ по 3 р., и для полугодовыхъ: при подпискѣ 3 р., и черезъ два мѣсяца еще 3 р. Для гг. студентовъ—годовая плата 8 р.; полугодовая 5 р. Желающіе пріобрѣсти журналъ за прежніе годы, уплачиваютъ за годовую экземпляръ. При перемѣнѣ адреса вносятъ 40 к. За объявленія, казенныя и частныя—строка пегита 10 коп., 1/2 страницы 3 р. 25 к., цѣлая стран. 6 руб. 50 коп.

При доставленіи въ редакцію „Юридическаго Обозрѣнія“ двухъ экземпляровъ юридическаго сочиненія, о немъ будетъ отчетъ и сдѣлана публикація.

Подписчики «Юрид. Об.» имѣютъ право на полученіе, чрезъ редакцію, свѣдѣній о положеніи и ихъ дѣлѣ въ Тиф. судеб. учрежд.—въ текстѣ журнала безвозмездно, а письменныя и телеграфныя—по соглашенію съ ред. журнала.

Редактор-издатель А. С. ФРЕНКЕЛЬ.